

7. Թղ. 98ա. Աղերս առ Ս. Աստուածածին,
բաղկացեալ տասներկու տուներէ, որոնց սկզբնատա-
ռերը կը յօդեն՝ ԿՈՄԻՏՍԱ ԻՐԻՅՈ: Սոյն ոտանաւորով
Տէր Կոմիտաս աղերսագիրն կը պաղատի Տիրամօր՝ «մը-
տաց յուշիմութիւն» և այլն շնորհել իր խօթացեալ նա-
հապետ զաւակին: Գրուած է անշուշտ անոր հիւան-
դացած օրերուն՝ 1699 նոյ. 25էն վերջ:

Կը գնենք Աղերսը ամբողջութեամբ.

Պոյս կուսանաց մայր ստեղծօղին,
Յիշեա զաղէտ քո Ուրբաթին,
Յորժամ զորդեակդ չարչարէին,
Էանց սիրտ քո սուր երկսայրին:

Որպէս եղեր մայր ցաւագին,
Եւ ողբացեր ըզքո զորդին,
Ի չարչարանսն և ի խաչին,
Աղիք ծնողիդ զալարէին:

Մաղթեմ ի քէն մայր գթութեան,
Հա՛ս ինձ նպաստ ի փորձութեան,
Քանզի մեղացս անչափութեան,
Բազում վտանգք ինձ զիպեցան:

Ի ծնողական գութըդ նայեա,
Զսէր Միածնիդ վերագիտեա,
Մայրականաւ գթով օգնեա,
Զխոց ծառայիդ ապաքինեա:

Տո՛ւր որդեկիս բժեկութիւն,
Յախից իւրոց ազատութիւն,
Մտաց իւրոց յուշիմութիւն,
Հոգւոյ նորա զգօնութիւն:

Սնձին նորա հանգարտութիւն,
Խելաց նորա խոհեմութիւն,
Յաւոց իւրոց անդորրութիւն,
Համանգամայն առողջութիւն: